ԴՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, 218 էջ։

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Մարտիրոսյանի այս աշխատությունը նվիրված է հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամական հարաբերությունների պատմության այն դրվագների ուսումնասիրությանը, որոնք այդ երկու ժողովուրդների միասնական ազատագրական ոգորումների փայլուն արտահայտությունն են հանդիսանում։ Հիրավի, XVIII դ. 20-ական թվականները առանձնահատուկ տեղ են դրավում այդ երկու դրացի ժողովուրդների պատմական հակատագրում։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ փլուզվելու էր Արևմտյան տերություններից ստանալիք օգնության դարերի պատմություն ունեցող հույսը և անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ակնկալությունները հիմնականում կապվելու էին ռուսական օգնության հետ, որովհետև ռուսական հզորացած տերության Արևելքում ունեցած արտաքին քաղաքական պլանները դալիս էին միահյուսվելու անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական ձգտումներին։

Մի շարք լեզուներով (հայերեն, ռուսերեն, վրացերեն, գերմաներեն, անգլերեն) գրականության և արխիվային նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռել Վ. Մարտիրոսյանին ստեղծելու մի աշխատություն, որտեղ բավական հանդամանալից վերլուծված է ժամանակի միջազգային իրադրությունը և ներքին դիվանագիտական այն բոլոր խաղերը, որոնց հետևանքով ոչ միայն սանձազերծվեց թուրքական ագրեսիան Անդրկովկասում և Պարսկաստանում, այլև արդելվեց Ռուսաստանին իրական ռազմական օգնություն հասցնել անդրկովկասյան ժողովուրդներին, որոնք իրենց մղած հերոսական պայքարում մենակ մնացին ընդդեմ թուրքական ագրեսիայի։

Դրբի առանցքային հարցը հայ և վրաց ժողովուրդների ազատագրական պայքարի լուսաբանումն է։ Փաստական հարուստ նյութերի հիման վրա հեղինակը բազմակողմանիորեն լուսաբանում է երկու դրացի ժողովուրդների համատեղ պայքարի դրվագները, սերտորեն միմյանց կապակցված ազատագրական ակնկալությունների ելևէջները, Ռուսաստանի և հատկապես Պետրոս 1-ի դերը այդ ըզձանքներին որոշակի ձևավորում տալու, գործնական պլանների մշակման և գործնական բայլերի դիմելու գործում։ Հեղինակը դիտականորեն բացահայտել է ազատագրական շարժման հայ և վրաց ղեկավարների քաղաքական կապերն ու բանակցությունները Ռուսաստանի հետ, նրանց ջանքերը՝ միացյալ ճակատ ստեղծելու պարսկական «ժառանգությանը» տիրանալու մարմաջով տարված ագրեսիվ Թուրքիայի դեմ։ Նա բացահայտում է վրաց թագավոր Վախթանգ VI-ի, Եսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանի, Դավիթ-բեկի, Ավան Յուրքաշու, Իվան Կարապետի և այլոց գործունեությունը հիշյալ ճակատը կազմակերպելու գործում։ Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել դիվանագիտական այն բոլոր զիգզագները, որոնք երբեմն ուրվագծվում են վավերագրերում, բայց և զրանցից հախուռն եզրակացություններ չի անում։ Նա, օրինակ, ճիշտ է հասկացել Եսայի Հասան-Ջալալյանի գրագրություններում տեղ գտած այն ակնարկները, որոնք որոշ պատմաբանների համար անհիմն առիթ ծառայեցին քաղաքական այդ խոշոր գործչին, հայ ազատագրական շարժման այդ մեծ երախտավորին մեղադրելու «դավաճանության» մեջ, մինչդեռ նա մինչև իր կյանքի վերջն էլ անդավաճան ծառայեց այն գործին, որին որդեգրվել էր երիտասարդ տարիքից։

Վ. Մարտիրոսյանը չի սահմանափակվել սոսկ փաստերի և դեպքերի արձանագրությամբ, այլ գիտական մոտեցում է ցուցաբերել, աշխատել է, և ոչ-ապարդյուն, հայտնաբերել և հնարավորին չափ համակողմանի ուսումնասիրության ենթարկել վավերագրերը։ Նա ՍՍՀՄ բազմաթիվ արխիվներում նոր նյութեր է երևան հանել, պատմագիտական կարևոր ճշտումներ և ուղղումներ մտցրել մի շարք հարցերում, որոնք, անշուշտ, կարևոր նշանակություն ունեն դրանց ավելի համակողմանի լուսաբանման գործում։

Մեր կարծիքով հեղինակի ծառայություններից մեկը պետք է համարել այն, որ նրան հաջողվել է ճշտել առ այսօր անառարկելի համարված Աբրահամ Երևանցու այն տեղեկությունը, թե Երևանը թուրքական զորքերի կողմից դրավվել է 1724 թ. հունիսի 7-ին։ Նրա երևան հա-

նած փաստաթղթերը վկայում են, որ Երևանը ընկել է սեպտեմբերի 22-ին. այսինքն. Երևանի հերոսական պաշտպանությունը ավելի երկարատև է եղել։

Վ. Մարտիրոսյանի շրջանառության մեջ դրած մի շարք վավերագրեր գալիս են ապացուցելու, որ, հակառակ արտահայտված մի շարք կարծիքների. Արցախի դիմադրությունը թուրքերին 1727 թ. չի կոտրվել. որ Սղնախները շարունակել են պայքարը դրանից հետո էլ՝ մինչև 1730 թ.։ Այստեղ հարկ է նշել. որ 1730 թ. էլ չի կարելի Սղնախների դիմադրության վերջնակետ համարել. որ թուրքերին այնպես էլ չհաջողվեց մինչև վերջ խորտակել Արցախի դիմադրական կորովը։ Այդ նույն վավերագրերը բազմաթիվ նոր մանրամասնություններ են պարունակում հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների ազատագրական պայքարի զանազան գրվագների վերաբերյալ։ Սրանցից բացի կան նաև մի շարք այլ նոր փաստեր. որոնք. անշուշտ, հարստացնում են մեր տեղեկությունները այդ հերոսական ժամանակաշրջանի վերաբերյալ։ Հատկապես կարևոր է վրաց Կոստանդին II (Մահմուդ-Ղուլի-խան) թագավորի գործունեության նշմարտացի լուսաբանումը (նրա գերը Գանձակի. Երևանի և այլ վայրերի պաշտպանության գործում. կապերը Ռուսաստանի հետ և այլն)։

Հարկ ենք համարում նշել, որ գրքում տեղ են գտել նաև մասնակի թերություններ. որոնց մեծ մասը նախկինում հայտնված տեսակետների ոչ քննադատաբար ընկալելու կամ թերևս հեղինակությունների առջև խոնարհվելու հետևանք է։ Այսպես. խոսելով այսպես կոչված Գանձակի պայմանագրի մասին, Վ. Մարտիրոսյանը գրում է. «Հայկական սղնախների ղեկավարները և Գանձակի մահմեդական ֆեոդալները համատեղ պայքարի դաշն կնքեցին ընդդեմ զավթիչների և նրանց դաղստանցի գործակալ ֆեոդալների» (էջ 157)։ Անհասկանալի է մնում և խորթ է հնչում Գանձակի մահմեդական ֆեոդալներ արտահայտությունը, որը անհարկի մտցված է մեր պատմական գրականության մեջ։ Ինչպես հայտնի է, Գանձակի մահմեդական բնակչության կողմից պայմանագիրը ստորագրել են, թաղամաս առ թաղամաս, հոգևորականները, քեթխուդաները և առհասարակ բնակչությունը. պայմանագրի տակ հարյուրավոր ստորագրություններ կան։ Մի՞թե Գանձակում ֆեոդալական դասը նման մեծ թիվ էր կազմում։ Ուստի և սխալ է այդ պայմանագիրը կնքված համարել Գանձակի մահմեդական ֆեոդալների հետ. զրկել այն ժողովրդական լայն հիմքից, որ իրականում ուներ։

Տարօրինակ պետք է համարել, որ սկսած հանգուցյալ Պ. Հարությունյանից, մեր պատմագիտության մեջ տարբերակում է դրվում Արցախի և Սյունիքի ազատագրական շարժումների միջև, ընդ որում, Սյունիքի շարժմանը հաղորդվում է սոցիալական-դասակարգային երանգավորում։ Մասնավորապես Վ. Մարտիրոսյանը, հետևելով նախորդ հեղինակներին, գրում է. «Ներա (Դավիթ-բեկի— Վ. Դ.) գլխավորած ազատագրական պայքարը ստանում էր սոցիալական-դասակարգային երանգավորում. գյուղացիության լայն մասնակցությունը ազատագրական պայքարին, անշուշտ, իր կնիքն էր դնում այդ պայքարի վրա» (էջ 114—115)։ Այդպիսով. Սյունիքի ապստամբական շարժումը իր բովանդակությամբ անհիմն կերպով հակադրվում է Ղարաբաղի և այլ վայրերի շարժումներին։ XVIII դ. 20-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումն Անդրկովկասում ժողովրդական էր, որի հենքը կազմում էին գյուղացիական զանգվածները, որպես բնակչության ամենաստվար տարրը։ Այնուհետև. ազատագրական շարժումն ինքնըստինքյան նաև սոցիալական ու դասակարգային շարժում է, որովհետև ուղղված է օտար տիրակալության և օտար տիրող դասի դեմ։ Հետևաբար, ապստամբական շարժումն ամենուր պետք է կրեր սոցիալ-դասակարգային բնույթ։ Սյունիքում տատանողական կամ դավաճանական վարքագիծ որդեգրած մեկ-երկու «ֆեոդալներիս» դեմ կիրառված պատժիչ միջոցները դեռևս չեն խոսում այն մասին, որ Սյունիքի և Արցախի շարժումների բովանդակությունը այլազան էր։

Ցավով պետք է նշել, որ հեղինակը բոլորովին չի խոսում ռուսական կասպիական կորպուսի կազմում գործած հայկական և վիրահայկական էսկադրոնների մասին, մինչդեռ դրանց անդրադառնալն, անկասկած, ավելի կատարյալ կդարձներ մեր ժողովուրդների համագործակցության պատկերը։

Ամփոփելով ասվածը, հարկ ենք համարում կրկնել, որ Վ. Մարտիրոսյանի հեղինակած գիրքը այս օրերին, երբ Սովետական Միության ժողովուրդները պատրաստվում են նշելու ՍՍՀՄ կազմավորման 50 տարին, խիստ արդիական նշանակություն է ստանում, քանի որ պատմաբանի անաչառ գրչով ներկայացնում է երկու գրացի ժողովուրդների ազատագրական հերոսական պայքարի անմոռաց դրվագները, Ռուսաստանի հետ զինակցություն հաստատելու ձգտումը։

Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ